

WIEN
BESTELLT
12 V

ՀԱՍՑԷ

M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

«Եթէ շահախոհները, կուսակցական կոյր հետեւողները, թեթեւամտութիւն, ցուցամուտութիւն և մեծամտութիւն մենէ հեռու ըլլան, և անկեղծօրէն միայն հայութեան ապագան խորհինք, կարող ենք մենք զմեզ վերականգնել և հայութիւնը մօտալուտ կործանումէ վերելել»
(ԹԱՓԱՌԻԿ)

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆ

Ամէն տեղերու համար դիմել է
Տարեկան արժաթ ֆրանք 5
Վեցամսեան » 3
Բաժնեկիցները կանխիկ վճարելէ ետ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը պատկանի:

Ազգի մը ապագայ կենսերի բարեօրոշման առաջին պայմանն է ՄԻՈՒԹԻՆ:

Միւրեղէն գիրքը կը բերէ կուղէք փրկուի:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

1898 ՄԱՐՏ ԱՐԵՆԵՐ

Թիի 20

Նոր Տարուայ առթիւ Յիշ. նախկին գործառնութեանց ու մեր ուղղութեան վրայ մի համառօտ տեսութիւն:

(Շար. 19րդ թիւէն և վերջ)

Մեր յեղափ. կուսակցութեանց վրայ հաբեւանցի տեսութիւնը մը ամփոփեցինք մեր նախընթաց երկու թիւերու մէջ, ցոյց տալով անոնց տասնամեայ ապագային ջանքերն և մինչև ցարդ շարունակուած ու տակաւին չարունակելի ներքին երկպառակտումներու շարժառիթը, այժմ կուգանք յանգել եզրակացութեան:

Ինչպէս ըսինք անխրատութիւն մը գործած պիտի ըլլայինք, եթէ մեր յեղափոխականներու վրայ ծանրանալով բողոքէինք թէ՛ ինչպէս այսօրն ժամանակէ ի վեր չկրցանք մեր վրայ ծանրացող չղիւղայն շարժառիթը և ազգը փրկելը, նկատելով որ տասնամեայ կարճ ժամանակամիջոցի մէջ անուշտ կառքի չէր ազգի մը ազատութիւնը ձեռք բերել: Միևնոյն ժամանակ նախերանգութիւն է ուրանալ թէ՛ ի ներքին հայ յեղափոխութեան՝ երդպիտ դիմադրողութեան գաղտնիքներու մէջ Արեւելեան ինքզնուր ցանկին մէջ մտաւ Հայկական հարցը. բայց միայն այսպիսով մը գոհանալ պէ՛տք է: Այնքան բազմաշարժառաջ աշխատութեանց, ա՛յնքան զոհերու և կորուստներու հանդէպ կարելի չէ՛ր գտնէ մեր յեղափ. սուրբ գործը հաստատուն հիման մը վրայ դրուած տեսնել, ունենալով միմիայն մէկ զօրաւոր կուսակցութիւն մը, որ՝ ընդհ. հայութեան համակցութիւնն ու կատարեալ վստահութիւնը չափած և անոր նիւթական ու բարոյական ածակցութիւնը վայելած ըլլար: Միթէ՛ այս միջոցով կարելի չէր ըլլար Հայկական յեղափոխութեան անկախութեան շոյափակի արդիւնքը ձեռք բերել և Հայրենասիրական եռանդով տողորմուած Հայ սրտերու բաղձանայ յագուրդ տալ: Միթէ՛ Հայը ա՛յնքան ապերախտ է որ բազմադարեան թշնամուոյն ձերաններէն զինքը իսպառ փրկելու ջանացող յեղափ. գործիչներն անորոշ, արհաւիր, անապաստ և նոյն իսկ հրապարկաւ անախորժ Հայհայրեններ տեղադրեն անոնց գլխին: Արդե՛օք յեղափոխական գործիչներն ազգատեանց, դաւաճան և մատնիչներ են, որ իրենց յախուռն շարժումներով կոտորածներու տեղի կուտան և ժողովուրդի զինին բազմադարեան շարժումներ բերելով ազգին իսպառ քննադէմ ընկելու կը նկրտին: Անուշտ ո՛չ, Ուրեմն ի՞նչ է մեր յետադիմացութեան ու ընկրկման բուն պատճառը, ա՛հա՛ Հայքում մը, որուն երեխաներն իսկ ընդհուպ կըրծան պատասխանել:

Ամէնքս ալ Հայրենասէրներ ենք և ամէնքս ալ ի սրտէ կը բաղձանք ազատութեան մեր սուրբ գործը վերածա՛ծ անուած տեսնել. բայց աւա՛ղ, մեր յեղափ. կուսակցութեանց յարգելի ղեկավարները՝ ետադրութեան ազգաւորած տեսնելն թելադրուած չեն զի՛ ջանքեր փորձելի զհաղործութիւն մը ընել և ընդհանրութեան կենսական շահերու առջև զլուր խոնարհել, այլ ընդհանրապէս յեղափ. սուրբ և փափուկ գործոյն մէջ իսկ իրենց անհատական արժանապատուութիւնը պահպանելու համար ամէն ջանք չեն խնայեր, որպէսզի մի քուցէ իրենց հիմնած ընկերութեան կամ կուսակցութեան ծրագրերն մէջ անհանա՛ր բայեփոխում մը մտցունելով կամ ընկերութեան անուշտ փոխելով ապագային իրենց որոշման

ու անկեղծ փառքն զրկուին, կարծելով թէ ապագայ պատմութիւնը պիտի մոռանայ, պիտի ուրանայ իրենց Հայրենասիրական անկեղծ գործունէութիւնները յիշատակել:

Ահա միայն այս թերութիւնը մը՝ նացած է մեզ իբր թողնողտ, որը ինքնին որքան փոքր, այնքան ալ աւերիչ ու քանդիչ է. այնպէս որ մեր պ. պ. գործիչները եթէ տակաւին յամառութեամբ շարունակեն ունենալ այդ ազգայնաս թերութիւնը, այլևս պիտի չկատարեալագոյն համոզուած ըլլանք թէ՛ ո՛չ միայն մեր ցանկացած ազատութիւնը չպիտի կրնանք վայելել, այլ տակաւին աներեւակայելի վտանգներու ենթարկուելով միանգամ ընդմիջտ պիտի զրկուինք մեր սիրելի Հայրենիքէն կորուստներով յաւէտ մեր ազգութիւնն ու կրօնը:

Մաղթենք ուրեմն որ ներկայ յուսալից 1898 տարուան մէջ մեր արժանապարդ ղեկավարները ու՛րի գան և յետ այսու աւելի խղճահարութեամբ վերաբերուին ազգային փափուկ գործերու մէջ, և մասնաւոր Հայ ժողովուրդի ներկայ կացութիւնը ի նկատի ունենալով Եւրոպոյ և Ռուսոյ քաղաքական հանդիմանքներէն օգտուելու համար մի կողմ թողուն ատելութիւնն ու նախանձը և ձեռք ձեռքի տուած մի սիրտ մի հոգի եղբայրաբար մեզ հետ գոհն ԿՅՅԵ՛ ՄԻՈՒԹԻՆ ԵՒ ՀԱՄԲԱՐԾՈՒԹԻՆ:

* * *

Երկու խօսք ալ մեր ուղղութեան վրայ — «Միութիւնը սկզբէն իրեն նշանաբան ընտրած է անաչառութիւնն ու անկողմնակալութիւնը, որուն համար Հայ հասարակութեան անկեղծ դասակարգին համակցութիւնը գրաւած՝ ցայս վայր կը պահէ և միշտ պիտի պահէ միևնոյն ուղղութիւնը, հակառակ այն սխալ կարծիքներու, զորս թիրախացութեամբ ունեցած էին շատեր՝ որպէս թէ «Միութիւնը կը հըրատարակուի, Հնչակեան Նորակազմ՝ Վարչութիւնը պաշտպանելու և Դաշնակցութիւնը տապալելու համար, Ընտ ոմանց ալ՝ իբր թէ Միութեան հըրատարակութեան անուան տակ մի նոր կուսակցութիւն պիտի կազմէ: Մենք ուրախ ենք ու ժամանակը հաստատուած մեր անկեղծութիւնը և այժմ գոհուանալով կը տեսնենք որ աշխարհի բոլոր անկեղծները տարածուող Հայ հասարակութիւնը կատարելագոյն համագործը է թէ՛ «Միութիւնը» ո՛չ մի կուսակցութեան կամ ո՛ւրիշ խմբակի կը պատկանի, և ո՛չ ալ մի նոր կուսակցութիւն կազմուել նպատակ ունի այլ իբր միութեան ջերմ փափաքող ո՛ւրիշ միութիւնի կը ջանայ հիմնադրել, որուն մէջ միայն կը նշմարուի ազգին փրկութիւնը և անոր ապագայ կենսի բարեօրոշմը:

Ստույգ է թէ «Միութիւնը» իւր տասն և ինն ամսեայ հրատարակութեան միջոցին՝ իւր քարոզած գաղափարին իրականացումը գլխաւորապէս և անոր առջև ներկայացող խղճողութեան պատճառները լուսաբանելու նկատմամբ Միութեան հարցը ինձաբանութեան ենթարկել է համաձայն իր ուղղութեան անոր վերաբերեալ բոլոր կարծիքներն ու հակասական դատողութիւնները — որ կուսակցութեան մասին ալ որ գրուած ըլլայ — անկողմնակալութեամբ հրատարակելէ զատ ուրիշ ո՛ւրիշ շոյափակի արդիւնք մը չը

կրցաւ առաջ բերել. բայց գտնէ միութեան քնացած գաղափարը ժողովուրդի ամէն խաւերու մէջ արժարեւելով միութեանը պատրաստեց և յաղորդեցաւ հըրատարակ բերել Միութեան գաղափարի այն ահագին հոսանքը, որուն աննշան բացառութեամբ փարած է այսօր ընդհ. հայութիւնը:

Չի մոռանք յիշեցնել թէ՛ մենք թէ՛ նիւթական և թէ՛ մոտաւորական կարողութենէ բոլորովին զուրկ ըլլալով՝ սոյն յաղորդութիւնը չենք պարտի ո՛չ մեր անհատական արժանիքին և ո՛չ ալ մեր անձնական չոր զինքն բղիժած հեղինակութեան, այլ կը պարտինք խոր քնն. մէջ խորացող Հայ ժողովուրդի սթափումին և միանգամայն հանրածանօթ և ճշմարիտ Հայրենասէր այն անձնաւորութեանց, որոնք հայկական յեղափոխութեան ստեղծողներն եղած են սկիզբէն և ունին իրենց ետեւ հաղորաւոր համակիր հետեւողներ. ահա անոնց հրահանգի ու հրաժանի համաձայն կը շարժինք մենք. թէ՛ որոնք են այդ անձնաւորութիւնները, թերեւս օր մը յայտնուի:

Դարձեալ կը կրկնենք «Միութիւնը» ինչպէս մենք քննադատեալ տես այսու պիտի մնայ իր նախադրած ուղղութեան սահմանի մէջ, առանց ո՛ւրիշ գիտում ունենալու նոր կուսակցութիւն մը կազմելու կամ գոյութիւն ունեցող մարմիններու գէժ հարմարութեամբ վարուելու, այլ ամէն ծայրայեղ միջոցներու սանձարձակ պիտի դիմէ աներկիւղ մինչև որ միութեան փափաքողներու բաղձանքը պըտակուած տեսնէ:

ԱԶԱՏ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ՆԱՄՍԿ ԽՄԲԱՐԾՈՒԹԵԱՆ

Ձեր նամակէն որչափ որ տեղեկացայ, մտադրութիւն ունիք Միութեան կազմելու ոչ թէ գոյութիւն ունեցող որչափ կուսակցութիւններ ի մի ձուլել. այլ այդ կուսակցութեանց պատկանող է միութեան գաղափարին համակցող անձնաւորութիւնները միացնելով: Ասիկա ըստ բացայայտ է Ձեր նամակին մէջ, որուն վերջը կուգի ծանրանալ:

Ինչպիսիք թէ պահ մը իրականացանք մեր ծրագիրը, լսու. հետեւեալք ինչ պիտի լինի, կը կարծէք թէ միւս կուսակցութիւնները մի քանի անգամներէ զրկուելով պիտի գաղտնի գործեն. ո՛չ, բնաւ ոչ. Դուք այդ կերպով ստեղծած պիտի լինիք միայն երբ որդր կամ չորդր կոթակցութիւն մը միութեան ինչ անուան տակ, որը ձեր քարոզածի և մտադրութեան բոլորովին հակառակը դուրս եկած պիտի լինի: Միւս կուսակցութիւնները անոր համար չպիտի գաղտնի գործեն, որովհետեւ նիւթական մեծ ոյժ ունին, և իրենց հետեւող ահագին բազմութիւն մը Ռուսաստան, հետեւաբար պիտի շարունակեն իրենց գործը և ձեր կազմած միութեանը պիտի ներկայանան այլ իբր նոր կուսակցութիւն մը: Այս կէտերը պէտք է ըմբռնել նկատողութեան առջև քննարկողութեանը ընկերներով միասին և ըստ այնմ գործնական մի ուղղութեան հետեւել, որուն միայն արդէն գրած եմ և կը գրեմ հետզհետէ Համբարձումի միութեան գործի մէջ, ուրիշ բան պէտք չէ սպասել արդէն իրար պիտի վատնէք ձեր ոյժերը. որովհետեւ, ինչպէս գուր ալ համոզուած էք, կուսակցութեանց միասնայն անկարելի է, իսկ ձեր մտադրած — չքրեմ երազած — միութեան ալ գործնական ո՛ւրիշ արդիւնք չունենալ, նոր կուսակցութիւն մը ստեղծած պիտի լինիք, որպէս հետեւեալք ա-

ւելի շար պիտի լինի:

Ձեր կազմելը միութեանը որչափ ալ որ ոյժով լինի, դարձեալ չը պիտի կրնայ իր ծրագիրը անթերի կատարել, նազարէկեանք և Դաշնակցական կարող են իրենց գործը շարունակել և նորաբար ձեռնարկութիւններով ու ցոյցներով հիմնովին խանգարել ձեր ծրագիրը և արդիւնք լինել ձեր ապագայ գործունէութեան. հետեւաբար ձեր կազմելը միութեան մէջ ո՛ւրիշ և է գործնական արդիւնք և օգուտ չեմ տեսնել: Դադարաւոր մը յղանալը շատ հեշտ բան է, դժուարը զայն գործածելն ու նպատակի հասնելն է. դուք պէտք է աքքի առաջ ունենալ ինչորոշ գործնական վիճակը, որը բնաւ յոյս չը տայ:

Այս մասին առաջմ առնալով, նրէն անգործառնալու պայմանաւ: Իմ Դաշնակցական լինելը արդիւնք մը չէ. միութեան գաղափարին հետեւելու. ես պատկանելով մի որդի կուսակցութեան կարող եմ անկեղծօրէն ցանկալ յոյս իր ու միութեան մէջ, մինչև ցանկալի միութեան կամ իմ գաղափարով ա մեր աշխուշտ միութեան յոյս իմ և է որդի միութեան մէջ: Ուրեմն պատկանելով մի որդի կուսակցութեան, պիտի շարունակեմ գրել Համբարձումի միութեան մէջ, ինչպէս որ դուք ևս կը ցանկար. միայն ձեզմէ անկողմնակալութիւն կը պահանջեմ, իմ գործնական պէտք է ամբողջովին հրատարակել և եթէ զիտողութիւն ունիք բացէն ընել, որպէսզի նպատակին չը հեռանամք և անկեղծ լինիմք:

ԹԱՓԱՌԻԿ

ՏԻՈՒՐ ՊԱՏԿԱՐՆԵՐ

Երբ ակնարկ մը ձգենք անցեալին վրայ, անմիջապէս մեր աչքերուն առջև պիտի պատկերանան մեր հարիւր հազարաւոր նահատակ եղբայրներու, ըկրորդ կիներու և բռնաբարուած բոլորներու ուրուականները, և այս բոլորէն վերջը, ներկայիս անտանելի ու անյոյս գործիչներ:

Պահ մը խորհնէք վերջ, այս բոլոր զոհերուն պատճառը կը գտնենք միայն և միայն ցուցամուտութիւնը, ետադրութիւնը, անտեղի փառասիրութիւնը և ժողովուրդին կոյր ծափահարութիւնը՝ կոյր հետեւողութեամբ: Կընդունենք, որ ուրիշ ազգեր ալ ազատութիւն գտած են անցնելով մի և նոյն արիւնշաղի շաղկէն. տակաւ մեր տուած այսքան զոհերով պէտք էր մինչև ցարդ ունեցած ըլլայինք ինքնուրոյն կուսակցութիւն մը Հայաստանի մէջ:

Պարզ է գիտնալ որ, մէկ քանի Յեղ. մարմիններ ունենալիս էր այս բոլորին պատճառը. կուսակցութիւններ ունենալը արդիւնքներ կրնայ ըլլալ այն տանի՝ երբ այդէն ունենած ըլլայինք ըստ բաւականի զարգացած ժողովուրդ մը, ան ալ իրական Հայաստանի մէջ, ժողովուրդի ձգտել տալու համար դէպի բարձր գաղափարները: Ընդհանրապէս մենք ունինք ժողովուրդ մը, որի մտքին ու սրտին վրայ բոլոր է գրել ստրկութեան ոգին, և որը չէ կարող նոյն իսկ զանազանի գէշը լաւել:

Բայց որքո՞ւ ճշմարտութիւն մ'է որ, 20)100 հազարամասնութեամբ յեղափոխական եղող ժողովուրդ մը երբ կը բաժնուի, կը պառակտուի, ալ կարելի չ'ըլլար ո՛ւրիշ գործ յաղորդել, և որուն առանց վարանելու կրնանք անմիաբանութիւն անուրը տալ: Եւ ինչու այսչափ կուսակցութիւններ, քանի որ նպատակը միևնոյնն է:

Չատ գատ Յեղ. կուսակցութիւններու վերաբերող գործիչներ, շարունակութեամբ լցուած, մտան ժողովուրդին խաւերուն մէջ, ամէն մէկը քարոզելով իրեն պատուած կու-

սակցութիւնը, և հաւատացնել տալով ժողովուրդին թէ՛ միայն ան էր որ պիտի փրկէր զինքը դարաւոր թշուառութենէն և գերութենէն, և միշտ չըրաւորեցի խոտուանի բնոյժը յաղորդեցաւ միամիտ ժողովուրդի համակցութիւնը շահելու: Այսպիսով կուսակցութիւններու, այսինքն ժողովուրդի անհատներու մէջ, սկսաւ գոյանալ թրջանախնդր, նախատեղու խեղ ոգին, անանկ որ չէրոր անհատներէ դրամ հաւարած ատենին չէին մոռնար նաեւ պատուիրելու որ, իրենցմէ զատ Յեղ. մարդոց դրամ չի տան:

Հնչակեանները Բ. Դրան ցոյցը ըրին և ժողովուրդի միամիտ ամբողջ սկսաւ աւելի մեծ համակրանքով վերաբերուիլ զէպի Հնչակեանները. անտեսն Դաշնակցութեան անուրը շատ քիչ ծանօթ ըլլալուն, իրենք ալ իրենց գոյութիւնը ցոյց տալու համար, սարով քեցին Պանքի խակ ցոյցը, և գիտնալով որ ժողովուրդը միշտ նորին հետեւող — մտածեցին և գիտ մըրին — ուժեղանակը — որով յուսանց ժողովուրդին համակրութիւնը իրենց կողմը շաց հել փառակ ըլլալով որ այդ պիտի ցոյց մը կրնար շատ արդաւար հետեւանքներու պատճառ. ըլլալ, ինչպէս որ ան առջին ցոյցի հետեւանք տեսած է իր արդէն: Բայց ի՞նչ փոյթ, պէտք էր որ Դաշնակցութիւնն ալ փառաւորուէր և այսպէս կուսակցութիւնները իրենց ետով, ու ժողովուրդը կոյր հետեւողութեամբ, առանց հեռատեսութեան անտեղի և կրկնափի ցոյցերով, պատճառ դարձան Հայ ազգը այս ներկայ վիճակին հասցնելու. բայց ցաւալի է տեսնել որ այսօրն դառն փորձերէ ետք, տակաւին Հոնիքի ժողովուրդ մը՝ խոհու և փորձառու:

Թէ ի՞նչպէս պէտք է ազատիլ ներկայ կացութենէն որ կը յանդգնի մեզ զրկել անդունդէն — Միութիւնը և լուրջ նպատածով մը բոլորնեղ բացարձակ անկարողութիւնը Յեղ. գործիչներու, որոնք չ'եմ գիտեր ինչպէս ձեռք են ա՛ցուցեր ամբողջ ժողովուրդի մը ճակատագրին հետ յաղաղու իրաւասութիւնը, և հեղիք է որչափ խաղալը դարձանք միամիտ ոչխարներու պէս կուսակցութիւններու ձեռքը, պահ մը սթափինք և հասկընանք թէ միայն միութեամբ է որ պիտի կարողանանք այս անեղ ճանապարհէն ազատելով, ազատութեան սնկին վրայ ոտք դնել: Այս գործին մէջ ամենէն մեծ պատասխանատվութիւնը քու՛ր վրայ կը ծանրանայ ո՛վ ժողովուրդը:

Ձի խաբենք և չի խաբուինք, Հայ ազգը ազատութեան խաղաղ նաւաճանով: Երբ կրնայ Հասնիլ միայն այն աստի՛ երբ բոլոր կուսակցութիւնները ի մի ձուլուելով կը կազմեն մէկ կուսակցութիւն, և որուն ղեկավարութիւնը կը յանձնուի ձեռնահաւ և լուրջ անձերու (*), և որպէսզի կարելի եղաւ ձին չափ շատ հասնինք ամենուր բաղձալի պէտք օրին, պէտք է մեր աշակցութիւնը և գործական նպատուները զանաք զէպի կուսակցութիւնները, որովհետեւ ժողովուրդը պէտք է լաւ գիտնայ որ, կուսակցութեանց պետերն չը պիտի ուզեն միանալ, որչափ տանի որ չի գաղտնիք ժողովուրդը իր աշակցութիւնը, ըլլալ նիւթապէս, ըլլալ բարոյապէս:

Սակայն երբ միութեանը իրաւորած ունեւելով Յեղ. մը. գործը կը յանձնուի ազնիւ մարդոց, այն առնէ մէն մի անհատի վրայ սրբապան ու նուիրական պարտք կը ծանրանայ աշակցիլ շա՛մէն պարագայի մէջ ազգին փրկութեանը մտածող, անհաճա՛նք և անկեղծ յեղափոխականներու:

Արդե՛օք որքան ուրախացաւ սուրբ-թանը, տեսնելով մեր յեղափոխականներու անմիաբանութիւնը, որոնք ձգած բուն թշնամին իրարու դէմ ունեւելան էին զիտուելի ատելութեամբ և մատնութեամբ:

Այն յեղափոխականները որոնք նպատակ ունին ցոյցներով վախցնել

(*) Միութեան մէջ քանիցս կըրկուուած պայմաններու համաձայն:

Յնամբն է փոխել կարծիքը Եւրոպայի
քաղաքականութիւնը, թող փութեան
հաւաքական ոյժ մը կազմել, որը մի-
այն կարելի կ'ըլլայ միութեամբ ևս որը
աւելի ազդեցութիւն կը գործէ թշնա-
միին, քան կարող մը անտեղի ցոյցերը,
որոնց հետեանքները եղած են, ու թե-
րեւս միջոց պիտի ըլլան ջարդերը:

ՍՈՒՐԻՆ
Վառնա 10)22 Յուն. 98

ԳԵՂԱՓՈՒՆԱԿՆԵՐՈՒ ԸՆԴ ԴԵՂ

Եզն ինչայ, դանակն կը շաղկապ
(Հայկական առակ)

Հայկական շորժումներն ակնը-
կատեւած արդիւնքն յառաջ չ'երեւոյն
պատճառաւ ունայր մարդարէ են դար-
ձած, և լուստներն կը կարողան յե-
ղափոխականներու անուան ամբողջ
բռնէ կը դնեն նոցա կռնակն:

Մին կամէ, «սխալ գոյժովայր
ընտրելին, . . . ը լինելու էր յեղա-
փոխութեան կեղծումովայրն և գործե-
լու ստորեւին» Ուրիշ մէջ կամէ,
«գործելու եղանակը չ'գիտեմք ամեն
մարդ չարութիւններով կոտորածներ ա-
ռաջ լինելն» լռիկ մնալի գործելու և
յարմար առիթին սպասելու էին ընդ-
հանուր յեղափոխութիւն մը յառաջ
լինելուն:

Մի այլ որ ասոնք ալ տղայական
կը համարէ և յանցանքը կը գտնայ ա-
նոր մէջ որ, «մենք արտաքին բարա-
րականութիւն չունէինք. եթէ Եւրո-
պական բարոյականութեան հետեւե-
լով զարմէին մեր յեղափոխականները
մենք այժմ ազատուած էինք. ուստի
պէտք է որ դիւանագիտական մարմին
մը ստեղծենք որով ձեռքը լինի ազդի-
րելու և որ՝ հետեւի Եւրոպական քա-
ղաքականութեան և ուղղութիւն տալ
Հայ յեղափոխութեան»:

Թէ ո՞ր էին այս խելացի ու բա-
նիմաց գլուխները երբ նրա յեղափո-
խութիւնը իր առաջին քայլերն կատ-
նել, ոչ ոք զիտէ, թերեւ իրենք ալ
մտածած են: Սակայն այսօր «ամէն դե-
րժէքն ասին մը կ'ըլլէ» և պարագայե-
րու օժանդակութեամբ ոմանք կամայ
և ոմանք անկամայ յեղափոխութիւն կը
չլսան, «զո՞ք գտնաւոր եղեւծը
նիկով ներկայացնելով ժողովրդին
Բայց մենք քննենք առարկայութիւնն-
րը միասին, ի նկատի ունենալով
յարակից պարագաներն ու կարելիու-
թիւններն:

Ընդունուած ճշմարտութիւն մը
է թէ յեղափոխութիւնը պէտք էր և է
Յեղափոխութիւնը բռնագործիչ գոր-
ծողութիւն մը չէ, ոչ իսկ յանկարծա-
կանպատահար մը:

Ծնունդը պայթում յառաջ կը բե-
րէ և բռնութիւնը յեղափոխութիւն:
Արդ յեղափոխութիւն ծնունդ է բը-
նապետութեան: Տաճառ-Հայաստան
իւր բոլոր մասերով կամ լաւ ևս է բե-
թութիւն իւր ամբողջութեամբ մշնա-
դարեան բռնապետութիւն մը կը ներ-
կայացնէ: Հայք թէ և այդ գրկի թի-
կան տերերն և մասնաւոր յառաջա-
գիւնդ տարրն են, սակայն տոկացին
բռնութեանց քրքան կարելի էր. բայց
եթէ ճշմարտ մայրաքաղաքի մասն
հատաւ պայթումը անխուսափելի էր
այլեւս չէ պարտաւորութիւն իր
դիմաց Եւրոպական ոյժ մը իսկ կարող
զիտէ ըլնել տաճարականիկ այդ պայ-
թիւնն այս ինչ կամ այն ինչ վայրի
մէջ վարդապետ Մարգար մը կը ծնի
Մշակութային մէջ և վերջինս աստիճան
նի ընկան իր լինի նորա համար գոր-
ծել իւր իսկ ծննդավայրի մէջ, ուր կը
գտնէ նոյն ճնշող ձեռքն որ տիրէ այլ
դաւաճներու վրայ: Կը ծնին Մար-
գարներ Հայաստանի ուրիշ նահանգ-
ներու մէջ և նոյն յարգելի պատճա-
ռաւ կը դարձնեն իրենց չարքը: Այս
անձնագրահներն մեղադրելով վերին աս-
տիճանի անիրաւութիւն և ճշմարտու-
թեան դէմ խօսակ պիտի լինի: Եւ: Նո-
քա ժամանակին պահանջը լինի, մինք
ոչ միայն կը գոչուինք այլ կը պայտենք
Հայրենեակը սեղանի այդ ուղղակի դերը:

Արտասահմանի յեղափոխականը
ևս կ'ըլլէ իրենց ուժերն . . . ի կամ
. . . ի մէջ կեղծումացունքին
պարագայից հակառակ և ժամանակի
պահանջից անհամաձայն գործած կը
լինէին: Նկատելով թէ անձնապաշտ-
պանութեան պէտքն զգալի էր թուր-
քից մէջ ամեն ուրիշ, Յեղափոխա-
կանաց պարտքն էր գործել ուր Հայ
կար և այդպէս աւելին: Եւ յեղափո-
խութեան սկզբները աւելի կը խոր-
հուէր ժողովուրդին զգացունքը տալ
իւր վիճակի, քան թէ որոշել պատե-
րազմի վայրը: Որով պատճառ ալ Հայ
և տակաւին չկայ այս կամ այն մասն
միայն գործելու դաշտ ընտրելու:

Ընդունուած ճշմարտութիւն մը
է թէ յեղափոխութիւնը պէտք էր և է
Յեղափոխութիւնը բռնագործիչ գոր-
ծողութիւն մը չէ, ոչ իսկ յանկարծա-
կանպատահար մը:

Թէ ամենք ալ այդպէս գործեցին ոչ ալ
ատով կրնանք ըսել թէ Լաւրիէն էր
գործել առանց յայտնի և առանց փո-
քը ընդհարումներու: Բարդական ա-
ռաւել կամէ, «նրկայն տուրակի մէջ
չը պահուիր»: Մենք չէինք յեղափո-
խութեան գոյններն, պատմութիւնը
մենք առաջ արձանագործած է շատ մը
յեղափոխութեանց սկիզբն ու վախճա-
նը, սակայն և ոչ մի այդ յարդար է
բացարձակօրէն սուսիկ փութիկ յեղա-
փոխութիւն յառաջ բերել, կամ խոյս
տալ փոքր շարժումներէ և կամ որոշիկ
ընդհանուր յեղափոխութեան օրն: Յի-
ղափոխութիւնը ամէն ազգի մէջ ալ
նախ սկսած է բերանացի բողբոջով,
որով յաճողած է փոքրիկ ընդհարում-
ներ մեթի պաշտպանողական և մերթ
յարձակողական և հուսի ուրիշ տեղի
ունեցած է ընդհանուր պատմաբանու-
թիւնն: Հասարակ խորհող միակ կըր-
նայ դատել թէ մեր յեղափոխականաց
գործը չէինք հարկը տարուայ գերի
ժողովրդեան մը հետ էր, որուն պէտք
էր հասկցունել իւր կացութեան ծան-
րութիւնը հաղորդել անմիջական դար-
մանը — Յեղափոխութիւն — և զինուց
գործածութեան վարձեցունել: Աստի
ալ ո՞չ դադարի և ո՞չ անձայն կայելի
էր Հայաստանի պէս երկրի մը մէջ:

Յեղափոխութիւն հետ պէտք էր
նաեւ մտցունել զենք, որով փոխարու-
թիւնը փոքրիկ ընդհարումներ յառաջ
բերած է բազմաթիւ: Այսպէս չէր միայն.
պատահած է որ խումբ մը կործինք Ա.
գիւրի մէջ յեղափոխութեան պէտքն և
նորա համար պատրաստուելու հարկն
բարդած միջոցին մի քանի քիւրտեր
զիւրդին հօտը դառնէ հովանի ձեռքն
յախոյաղելով կը տանին, պիւրջաբոց
առ լսելով մեր յեղափոխականներուն կա-
սեն «ցոյց տուէք ձեր ազգասիրութիւ-
նը, ապացուցէք ձեր քաղաքացին, ահա
պատահութիւնը իւրեցեք մեր հօտին
քիւրտերու ձեռքէն, որ մենք ալ հա-
ւատանք»: Այսպիսի պարագայից տակ
խոյս տալ ընդհարումներէ կը նշանակէ
չը հաւատալ իրենց քաղաքացին և ար-
գէն ինչով պիտի կրթին Հայ ժողո-
վորդն ինքնապաշտպանութեան, ո՞չ
պարտքէն այսպիսի օրհնակով պատահե-
թիւններով: Այսպէս երբ անկամ մը
ստեղծեց ազատութեան և ան ստեղծ
հաղափարով կը վառուէին կը գործեն,
հեշտ դործ չէ զայն դատողութեան
չըբանակով չըբանակով: Երբ անգամ մը
բռնութեան դէմ կուռուելու դադարակ-
մունքն վրայ կ'անհաղթելու, այլ ևս
կարելի չէ գաղել կուռուել բռնաբան-
քը և որոշող լինուել: Այսպէս պատա-
հեցաւ մեզ Հայոց մէջ:

Այսպէս ինչպէս համարեց հարկէր
ամբողջ Հայ ազգին համարաբարական
կրթութիւն տալ և ապա գործի սկսել:
Այս կերպի դարերու կը կորստի և կը
յանձնարարեմ լռիկ մնալ ինչպիսիքն:

Այժմ ամենաարդարացի քննադա-
տութեան կուգամք որ Եւրոպական
քաղաքականութեան հետեւելու միտքն
է: Եւ երբէք դէմ չեմ այդ կարծիքին
թէ պետութիւնը մի՞ զիտ ունին Հայ-
կական խնդրոյն մէջ, բայց ինչ տղա-
յական կը թուի կարծիք թէ տէրու-
թեանց քաղաքականութեան հետեւե-
լով մենք լաւագոյն վիճակ մը կունե-
նայինք: Պարզ Այլի ցոյցն Անգլիոյ
վրայ ձեռնած էր, ինչ կղաւ արդիւնքը
գերօգէն անհուն վար: Սակայն ըն-
դունինք թէ մեզ պէտք էր օգտուելի
պարագաներէն, գիտնալ ժամանակի
քաղաքականութիւնը և ըստ այնմ շար-
ժիլ: Քննենք ուրեմն թէ կարելի էր:
Ա. Հայք աւերութիւն մը չը կարգելով
մեր քաղաքացիներն նշանակութեան
զուրկ պիտի մնային: Եւ Եւրոպական
քաղաքականութիւնը այնպէս հովերու
նման մերթ հարուսէ և մերթ հիւսիսին
կը վիշէ և որպէսզի մեր արտաքին գոր-
ծոց պատճառներն մի կողմ քաղա-
քական գոգութիւն կարող լինէին ընել
պէտք էր լինին կատարեալ քաղաքա-
դէտներ, ճարպիկ խօսող, հարուստ և
մարդկային աշխարհին ճանչցուած: Եւ
մէջ կը գտնուէին այդպիսի անձինք: Ի.
Ունենալու էինք միլիոններ որ վար-
ձէրն իրարէնք մեծ տէրութեանց
արտաքին պատշտամունք մէջ գէթ:
Ուրիշ կերպով մեզ անկարելի էր հետե-
լի տէրութեանց քաղաքականութեան:

Անգլիա աշխարհի հզօր կուռա-
վարութիւնն է և Սոցիալի մեծ աղոյն
քաղաքական գոյն որ երբէք ճնշած է.
սակայն նոյն իսկ Սոցիալի իւր հաղա-
բար որ գործակաւորներով քաղաքա-
կան ասպարէզի վրայ դարձած շատ մը
զարդուեալ անգիտակ կը մնայ մինչև
կատարուին. Սոցիալի իւր աշխարհ-
ութեան ունից գիտցաւ կանխաւ Ռու-
սիոյ փորթ-Արթուրի դրաւելու մասին
Սակայն եթէ արդիւնք անկարելի էր, հա-
ւատանք պահ մը թէ Հայ մարմին մը
Սոցիալի մը և Պիլադի մը ջանք քա-
ղաքական ճարպիկութիւն ունենայ
զարդուեալ թափանցելու, բայց միթէ
քաղաքականութիւն գիտնալով անոր
կը զատահուի: Անցաւ թող խօսի:
1895 թ. առունք մեծ տէրութեանց մար-
տանաւ երկ խուռեցան Մարմարի
բերանը և ամէն որ կը խորհէր թէ
«Մենք մարդասպանն» իր անմիջա-
նորմէնց առաջ մը մէջ կը գտնուէր. նոյն
իսկ թուրքն իր տէրութեան կործան-

ման կը սպասէր ժամէ ժամ: Ընդհա-
նուր յեղափոխութեան ժամ էր այն-
պէս չէ — Եւ ընդհ. կոտորածի ժամա-
նակի փոխուեցաւ. մեզ պաշտպանե-
լու համար եկող նաւերը մեզ ջարդելու
առիթ եղան: Նոյնք պատահեցաւ Կրե-
տէի. անկախութիւն չնորհելու դի-
տումով եկող նաւապետները քրիս-
տոնականները և միակողմէն հրաման ը-
րին: Արդ Եւրոպական քաղաքակա-
նութեան հետեւի ուրիշ բան չունեա-
կիր եթէ ոչ ձեռքերն ծալած նստել և
սպասել «Քիտիի Գալստեան»:

Եզրակացութիւնը սա է, ինչ որ
պատահեցաւ և պիտի պատահէր ազա-
տութիւն խնդրող մը: Յեղափոխա-
կաններն մեղադրելի չեն այդ մասին:
Մեր միակ թերութիւնն էր ինչ որ
մեծ ու թէ ազգի և ազատութեան հա-
մար այլ կուսակցութեան և պատմա-
մուրթեան համար — բացառութիւն-
ները յարգելի են: — Եթէ այսպէս չը
լինէր մենք համարալի կը գործէինք բա-
կիւրէն իվեր, կ'օգնէինք իրարու և յե-
ղափոխութիւնը կատարէր հսկայ քայլեր
որով պիտի հետեւէր Եւրոպական քա-
ղաքականութիւն: Ուրախալ է տես-
նել թէ այժմ կուսակցամուրթեան
գլուխ գաղափարը տակաւ առ տակաւ
կանգնուեալ տեղի տալով համարա-
լիութեան ու միութեան գաղափարին:
Ինչ որ ևս կը գտնուին հայկականու-
նեք սակայն գիտնալու ենք թէ անոնք
երբէք չը պիտի վերանա մեջտեղէն, ա-
մէն դար չենած է այդպիսիներ: Արդ
մենք յառաջանանք ձեռք ձեռքի տա-
լու մեր ետեւէն թողնելով վատերն:

Պատժութիւն ԴԱՅԵՆԻՍԻԱՆ
29 Յունի. 98 ԱՐՄԷՆ

ՆՍՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՆԵՆ

... իմարդիք

«Միութիւն» թերթը քաղաքիս Հայ
գաղափարականութեան օրրոտընք սիրելի
կը գտնուայ, որովհետեւ ժողովուրդը ի
սրտէ կը ցնակայ տեսնել յեղափոխա-
կան մարմիններու միութիւնը և կամ
գէթ համարալիութիւնը, որուն իրա-
կանացումը զգալիաւորաբար մինչ այսօր
չէ տեսած թէ և, սակայն գոնէ միաց-
ման նկատմամբ գրուած ու փոխանակ-
ուած կարծիքներն և տպաւորութիւն-
ներն, ջանքերն և միջոցները լսելով
կամ կարգաւոր իր այլամ սրտին սփո-
փառելու զովայում մը կը զգայ: Այլ
կողմ կարած է չնշանակել զայն
չ ա կի խմբագրութեանց կամ ինքնա-
հաւան գործիչներու ընկելը ու եւ ձեռ-
նարկներէն ու փուճ խոստումներէն.
ինչ որ, որ հակառակ մինչև այսօր ի-
րենց եղած յեղափոխականներու և
ոչ-յեղափոխականներու աշխարհ դի-
մուռներուն ու ջանքերուն, մեր յեղ-
ափոքը իրարու մօտեցաւ, զիտար
զրկելու համար դեռ գործնական ունէ
մի քայլ չառին, առնուած քայլերն ալ
մեծ «Միութիւն» գաւառները երբէք թողած
չեն. անպատճառ ամէն առաջարկած
պայմանի մէջ զիտի ու քրեւի հօտը
պիտի բուրէ, և դեռ մեր գլխուն պա-
կաւ հետ ևս ուսուցիկ, սինալիզ հայրե-
նախարարան յորդորներ հրապարա-
կաւ թէ առանձին չըբարեկամեաւ. և
ինչ նաեւոր ու համարուժ ունենայ
մեր ժողովուրդը այսպիսի պետ յեղա-
փոխականներու վրայ և, ինչպէս
այլեւ իւր աջն ու ուշը ուրիշ կողմ չը
դարձնէ գտնելու գէթ ճշմարտ գոր-
ծիչն ու կարմիրակրթութիւնը որը իւր
սրտի բազմաթիւ լու էր գործարար:

Ձեռք կրնար մասամբ մեղադրել
ժողովուրդը զէպ յեղ. կարգակերպու-
թիւնը ցոյց տուած ցրտութիւնը քանի
որ անձնաւոր և կամաւոր անհատներ
կարգակերպութեանց զուգիւր մնան.
Թէպէտ սոսկալի ստոր նկարագրի աշ-
պիւր դեռ կրնան մնալ ներկայ կարգա-
կերպութեանց մէջ, որոնց մէջ նմոյց
միութիւնին 16րդ թուոյն մէջ զայ
բոլորով կարողացին:

Մարտական չնչնակեանք, որքան
որ ստող աղբիւրներէ կիմանալ է ա-
մենէն աւելի ջերմ աշխատող եղած են
գործնական համարալիութեան եթէ ոչ
միութեան. ասոր ստուգութիւնը բա-
ւական պիտի ըլլայ ամէն Հայրենասէ-
րի ուղարկութիւնն ու ուսին իրենց գը-
րաւելու:

Միութիւն կամ համարալիութիւն
ըստ մի գոյնութիւն ունեցող կարգա-
կերպութեանց մէջ ինքնին անկարելի
է թելադրել չէ գործ, անկողմնակալ
լուր անձինք չը գործարար խառն ժո-
ղով մը լինեալ յեղ. ժողովաց զեկա-
վարներու հետ — չէ գործ անձնաւորու-
թիւնը կրնար ինչ մարմնաց մաս-
նաճկալներու կամ կամիւն, ներքեւ թուի
այդքնէն. խառն ժողով մէջ կը գը-
ռուի նոր ուղարկութեան, նոր պայման,
նոր կարգակերպութիւն և կամ յար-
մարագոյնը եղանակներ մէջ վերաբը-
նութեան մը ու օրրոտութեան մը:

ԱՐՄԷՆ
ՅԻՉՊՈՒՐԿ

ՀԱՄԵՐԱԶԻՌԹԻՒՆ
ԹԵ ՍԻՈՒԹԻՒՆ

ՄԱՐԱՊԱ, 2)14 Յուն. 98

«Միութիւն» թիւ 16ում զետեղ-
ուած «Համարալիութիւն և ոչ թէ Մի-
ութիւն» վերնագիր և Թափառիկ ըս-
տորագրութիւն կրող յօդուածում շատ
զեղեցիկ կերպով մերժած է միութեան
գաղափարը և նրա տեղ արժարձած
համարալիութեան հաւանական գա-
ղափարը: Պէտք է այժմ ընդունել, որ
միութիւնը արդէն անցած է ազգա-
լին բազի ցանկութիւնների շարքը.
ցանկայանի համար հա մար մարդիկ ժա-
մալմաճաւ չեն լինի: Այլ մի յիտակից
մարդ իրան թոյլ չի տալ հաւատալ, որ
կարող է երբ և է ընդհանուր, միու-
թիւնն առաջնաւ, եթէ այդպիսիներ
կան, զրանք անշուշտ բռնուած են
ինքնախաբէութեան տեսողով: Համա-
րալիութիւնը, և այն էլ ժամանակա-
ւոր, դա ամենքի համար հասկնալի
է և ցանկալի:

Ձը մտնանք այստեղ ասել, որ
պիտիւնութիւն առաջարկած միջոցը,
համարալիութեան գաղափարի գոր-
ծարարութեան մասին, մեզ թուայ բա-
ւական տարրիկակ: Պ. առաջարկում
է հաստատել վերին ժողով որի ան-
դամները ընտրուած լինին իւրաքան-
չիւր կուսակցութիւնից քննադատ
բուճարկութեամբ: Այդ ձեռք միանգա-
մայ աւելորդ է, որովհետեւ իւրաքան-
չիւր կուսակցութիւն արդէն իր ընդ-
հանուր զաւազութեան բաժն տուել
է իր կինտրին. նրանից պարզ հետե-
ում է, որ իւրաքանչիւր կինտրին թէ
լիւրօ վայելում է ընդհանուր վստա-
ւութիւն իր կուսակցութեան կողմից:
Այս զէպքում կարծում են, կինտրոն-
ները անկախ կերպով կարող են իրար
մէջ համաձայնութիւն կայացնել և հա-
ւատացնել մի այդպիսի ժողով, որը
տարբեր մի կամ մի քանի անգամ կը
գումարի իր խորհրդակցական նիստե-
քը: Նոյնպէս պակաս տարրիկակ չէ
այն պարտաւորութիւն, որ պիտի
այն զիտում է վերին ժողովի վրայ,
այն է որոշել «հնդհանուր պատմա-
բութեան» ժամանակը: Կարծում են
որ «ընդհ. պատմաբութեան» ժամա-
նակի որոշում անհնարին է, քանի որ
այդ յայտարարումը ժամանակը կա-
խում ունի ժամանակի համաձայն-
ներէն: Իսկ այդ համաձայնները, ո-
րոնցից նշանակուած է Դիւանագիտա-
կան խմբագրութիւնը, որ իւր
հատարակ մարդկանց, այլ և զիւրա-
դէտներին քանի որ «ընդհ. պալա-
տմութեան» յայտարարումը պա-
հանջում է որոշ պայմաններ, իսկ այդ
պայմաններէն է ենթակայ են փոփո-
խութեան, կարծում են անհնարին
թիւն կը լինի այդ մասին որով ձեռ-
կայացնելը ծանկալի է, որ համարա-
լիութեան խնդրը աւելի ծաւալ տա-
նայ:

Հիւսիսիւ
ՅԻՍԻՍ

ՊԱՏԱՍԽԱՆ

ՏԻՐԱ Յ. ՃԱՆԿԻՆԵԱՆԻ ՄԻՌԹԹԻՒՆ

ԿՈՉՈՒԳՐԻՆ

Ազնիւ Հայրենակից

«Միութիւն» պատ. թերթի թիւ
18ի մէջ հրատարակած Ձեր «Միու-
թեան կոչ»ը այնչափ գաւառ և սրտա-
մոխրը յիշատակներ արթնցրեց մըտ-
բուսմ և այնպէս խոր կերպով յուզեց
որտիւ վրայ բազում ժողովրդի վերե-
քերն ու ստիպեց ինչ նորից ձեռք առ-
նել երկար ժամանակից ի վեր անար-
ժութեան դատապարտուած զրկեց
ցոյց տալ հրապարակաւ այն սուր և
մահաւթ վայրերն, որոնք խորն են
իմ և ինչ նման հրապարտ հնչ և վը-
տանաւոր տարրիկներն սրտումը ազա-
տարարի գլխակի տակ թագնուած մեր
կը կարգ յեղափոխական հրէշներն:
Շատ լուստեւ էր եղել, ազնիւ հայրե-
նակից, հաւատալով թէ «Հնչակեան»
և «Դաւանկցական» անուն կրող մեր
ազգակիցներն կարող պիտի լինին մի
օր միանալ իրար հետ իրեն անկեղծ
եղբայրներ կուռելու համար մեր ա-
րիւնքաբե թշնամիի գէմ և լուծելու
համար նրանից մեր հաղաբար անձ-
նուրաց մարտիրոսների արդէն վը-
ժու: Անտարազգայն այդչափ լուստեւ
չէիք լինել, եթէ մեզ նման դժբախ-
տութիւն ունեցած լինէիք չափելու
նրանց հոգոյ արեւութիւնն եւ սրտի
ազնուութիւնը գործնական ասպարի-
ղում, նոյնիսկ պարծնալի գալտում:
Բայցամիթի փաստերից միայն հե-
տեւալ երկուքը կը յուսամ թէ բա-
ւական պիտի լինին փոխելու Ձեր այդ
համարում և չափաւորիւ ձեր ջան-
քն ու եռանդն:

1896 թ. Յունիս 14րդ օրն էր. կըր
Սարմատեւ Էր հասնում մի սուրհան-
դ

ղեկավարներն «Երեւոյ Թուրքիայէն» վերանորոգող կը հրատարակէր» յօդուածներով նախ քանի մը կեղծ անուններով գրեցի եւ անկէ վերջը ըսկեցի միշտ «Կայծեր» ստորագրութեանց պէս, եւ միեւնոյն ժամանակ կ'աշխատէի միշտ «Արմէնիա» բաժանորդներ գտնել թէ Պոլսոյ եւ թէ գաւառներու մէջ:

«Հայոց Հայրենասիրաց Միութեան» կանոնադրները զրկեց, 80ի չափ անդամներ գտաւ, նմանապէս եւ եւ նոյն «Միութեան» անդամ եղաւ, իւրաքանչիւր անդամի տարեկան վճարը 45 ֆր. առնելով իրեն զրկեցի, եւ արդէն սկիզբէն սկսած էի նուէրներ հաւաքելով իրեն զրկել եւ կը հրատարակէի «Արմէնիա» մէջ ցոյց տրուած կեղծ անուններով ու սկզբնատառերով որ կ'որոշէին նուիրատուը:

Անմահ Բաֆիի գրքերէն եւ իւր հրատարակած կամ Թուրքիա մուտքը արգելուած գրքեր ինձ կը զրկէր՝ ծախելով ստալը իրեն կը զրկէր:

Որչափ որ Փորթուկալեանի գործակատար ու թղթակցէի էի, բայց նորէն բաժնուած էի իմ ընկերներէս եւ մենք գրեթէ բոլորովին անկախ կը գործէինք Պոլսոյ մէջ՝ բացի մի քանի գաւառներէ: Երբեք մէջ գտնուած յեռ. խումբեր մեզ հետ կապուած էին:

1889ին վերջ գրեթէ ամբողջ ընկերներովս համալիր էինք Փորթուկալեանին եւ ընտ տարբերութիւն չէինք տեսնել ստակ մեր քով մնալուն կամ Փորթուկալեանին զրկելու մէջ, ուրիշ ամբողջովին կաշխատէինք «Արմէնիա» անկէ տարածելու եւ աւելի նուէրներ հաւաքելու, միեւնոյն ժամանակ կըրտանային «Հայաստան» եւ «Ազատութիւն» թերթերն իսկ: Բայց Մայր-Երկրի խումբերու յարաբերութիւնը միայն մեզ հետ էր:

Փորթուկալեան մեզի հրահանգ տուաւ, «Ժամանակը հասած է որ ձեռնարկէք մի քանիստ մը կազմելու, եթէ . . .» (») քաղաքէն կազմելը շատ լաւ կընէր քանի մը պարագաներ եւ . . . ինձ ծանօթ լինելուն համար եւսայլ:

Մենք մեր ունեցած բաւարանով անմիջապէս գրեցինք . . . շուտով պատահաբան ստացանք որով պատուաւ էին այդ հրահանգին համաձայն գործելու գարնանս Այս քաղաքներութեան միջոցին Փորթուկալեանի մէկ զգուշիկ ընթացքը կ'արժէ որ պարզման Օտար նամակատան մը մի պատճենի հետ շատ բարեկամ ու մտերմ էի, այս միջոցին 60էն աւելի «Արմէնիա» կը տանային իւրաքանչիւր փոսթին, իսկ ինչոք «Արմէնիա»-ն էր: Եւ ինչ որ թերթ մը վրայ միայն գտնի մը անցընելով բերել տայ. փոխաբերական մի թերթին նամակը ձեռով 25 սանթիմ վճարելով՝ ամբողջին համար 1 ֆրանք 60-70 սանթիմ կը բաւէր այս ատուով 13 ֆրանքէն աւելի կը չափէր Փորթուկալեան, վերջապէս նամակատան պաշտօնեան համոզելով հաւանութիւնը առի եւ իսկոյն գրեցի Փորթուկալեանին, իրեն բոլորովին անհաւատալի թուեցաւ այս առաջարկս եւ վրատագրաւ, երկրորդ նամակովս ապահովեցի զինք եւ անկէ վերջ սկսեց զրկել թերթերը ըսած ձեռովս, երեք ամսոյ չափ այս ձեռով ստացայ, որ մը նամակատան անօրէնք զիս հրաւիրելով պատուիրեց որ նորէն նամակի ձեռով բերել տամ: Ընդունեցի անօրէնքի պատուէրը:

Պատճենայ բարեկամս ազգարարից ինձ որ հասցէս կապածելի եղած է, շատ հաւանական է որ վտանգուիմ. ուստի պէտք էր հասցէս փոխել. իսկոյն պ. Փորթուկալեանի գրեցի կեղծ հասցէ մը տալով: Նամակս իրեն հասնելէն վերջ նորէն շարունակեց հին հասցէովս զրկել նամակներս եւ թերթերը, շարունակութեամբ տեւեց 3-4 փոսթայ. բարեկամս սաստիկ յուզուեցաւ կարծելով թէ ես անտարբեր գտնուած եմ: Յետոյ խիտ նամակ մը գրեցի պ. Փորթուկալեանի որուն պատարանեց հետեւեալը: «Խիտ գրածիդ համար հասցէդ փոխեցի. նոր հասցէդդ չը զրկելուս պատճառը 3-400 հատի չափ հին հասցէովդ զբոստում պահարաններ ունէինք կ'ուզէինք որ սպառնալէն վերջնոր տուած հասցէովդ զրկել նամակներդ եւ թերթերը: Մեր զայրոյթի եւ բարկութեան չափը կանցնէր երբ կը տեսնէինք 3-400 պահարանի համար ինձ զալել վտանգը ոչինչ կը տեսնէր: Իսկ մասամբ ուրախ եղանք իրեն խնայողութեան համար, կարծելով եւ յուսալով թէ քանի մը հազար ոսկիներ սուրբ գործոյն համար կ'ունենայ պատրաստի անպատճառ:

Մեր . . . ի հետ ունեցած բանակցութիւնը վերջնական էր 800 ֆր. պէտք կար, որ 90 երկուստարներ զինուէին եւ զարեան եղանակին գործի սկսէին: Մենք պատրաստ գրած չունէինք, որովհետեւ միշտ կարեւոր մարդիկ կը զրկէինք Հայաստանի այլապէս կողմերը, արդէն . . . եկած նամակներու իմաստն միշտ կը հաղորդէինք պ. Փորթուկալեանին: Վերջապէս թէ՛ իրեն եւ թէ՛ մեր հաւանութեան վերջ-

նակաւ որոշուեց տրուած էր: Քանի որ 20-25 օր առաջ 650 ֆրանք գործած էինք պ. Փորթուկալեանին, իսկոյն իրեն գրեցի որ . . . պահանջուած 800 ֆր. չը զրկէ, որպէսզի՝ ձեռք ժամանակին գործի սկսուէր: Փորթուկալեան գրած նամակիս պատասխանեց. «Առ այժմ յետաձգեցէք այդ խնդիրը քանի մը ամսուան համար: Այս պատասխանը կասկածանք տեղի տուաւ մեզ, քանի որ իրեն հրահանգով պատրաստած էինք այդ գործը: Երկուսեանք թէ՛ մի գուցէ վստահութիւն չունենայ մեր վրայ, որ իրաւունք չունենք քանի որ այդ ահապահ գումարը մենք զրկած էինք իրեն եւ այդ գումարէն միայն 800 ֆրանք կուգէինք:

Արդէն . . . սկիզբէն մեր բոլոր գաղտնիքներուն տեղեակ էր եւ շատ ժամանակ իրեն հրահանգով կը գործէինք, ինչպէս որ ամբողջ ժողովը լեզուէն վստահութիւնը վայելող ու պաշտելի անձ մը կը թուէր: . . . անունը նամակին մէջ յիշելով իրեն զրկեցինք, որպէսզի ուրիշ պատճառներ մէջ չը բերէ, եւ պահանջեցինք որ անպատճառ մեզ զրկէ 800 ֆրանքը: Պ. Փորթուկալեան երբ կը տեսնէ որ այլեւս փախուստի միջոց չունի եւ անկարելի է սուտ խօսքերով մեզ վստահացնել, լակոնական ձեռով մը մեզ պատասխանեց: Քանի որ . . . եւս համաձայն է այդ գործի ձեռնարկութեան, կարող էք սկսել գարնան դէմ, իսկ զալով 800 ֆր. ին «Հայրենասիրաց Միութեան» թէ՛ գրած եւ թէ ներքին ոյժ չունի:

Պ. Փորթուկալեանի նամակը . . . ին տուի, կարգաւ վերջ ըսաւ. «Երբ հասցէիդ պահարանին ինչո՞ք եւ գործին առ այժմ յետաձգուելու առաջարկը տեսայ, ես կ'ստանձնեցայ որ այդ մարդն անխտանալի ոմն է եղեր, ահա այսօր կասկածներս իրականացան մեզը, հազար մեզը այն զրկած բնականներուդ . . .»:

Օրն Բարեկենդան էր, ամէն տեղ ուրախութիւն եւ գոհարմութիւն. իսկ մենք քանի մը ընկերներէս . . . սենեակը փակուած լայով կը կարդալէինք, . . . Փորթուկալեանի այդ նամակը, մեր ցաւեր ու փշուր անսահման էին. թէ ինչու:

Տօմարը (ծածկագրով) մէջտեղ գրած էինք, մտաւարագէս 15-20 հազար ֆր. ի չափ զուտ նուէր զրկած էինք իրեն: Նուիրատուաց մէջ կը գրտնուէին հարուստ վաճառական, միջին դասակարգ, մասնատանց մէջ միեւնոյն երեկոյ արիւն-ըրորիք թափող զուտակներ եւ երեսու Մի թէ Պոլսոյ մէջ, այլ գաւառներէն ալ: Անխիղճ պ. Փորթուկալեան այդ ընդհանրութիւնը իր կողմէն անցուցած էր: «Հայրենասիրաց Միութեան» ամէն մէկ անդամէն երկու տարեկան 90 ֆր. առած իրեն զրկած էինք: Անկէ գտած ծախուած գրքերու եւ մեր ձեռքով պատրաստուած Մշակի կիւլիզարի քանի մը հարիւր լուսանկարներով բոլոր շահերն ամբողջովին իրեն մօտ մնացած էր: Մէկ ու կէս տարիէն աւելի թղթակից եւ գործակատար եղած էի իրեն, մինչեւ անգամ փոսթայի ծախք չառնելով իրմէն, ահա՛ մեր վշտանալու պատճառն, այսչափ հազար ֆր. իրեն զրկելով խաբուած էինք անգութ Փորթուկալեանէն. եթէ մենք վստահ չը լինէինք թէ իրեն զրկած դիմանիս օր մը նպատակին չպիտի գործածուի, հաւանականաբար սանթիմ մը իսկ չէինք զրկեր. ահա՛ ինչպէս մեր վստահութիւնը չարաչար գործածած էր պ. Փորթուկալեան:

Ընկերներով որոշեցինք «Հայրենասիրական Միութեան» վարչութեան անդամաց հասցէները պահանջել իրմէն. որպէսզի բացառական պահանջներ թէ՛ ինչու հաւարած ստակները նրապատակին չեն գործածուիր եւ ինչու զան այն ստակները, քանի որ բողոք մը իսկ զրկուած չէր այդ ստակով: Պ. Փորթուկալեան մեր այլեւսամակին հետեւեալ շատ խիտ ու սպառնական պատասխան տուաւ: «Միայն դիւ պիտի ծանաղէ ուրիշ ոչ ոք, հակառակ պարագային իր ըմբոստ պիտի դատապարտուի: . . .» Փորթուկալեանի այս սպառնական նամակը ցոյց տուինք . . . ին, նա՛ մեզ շատ խնայել խորհուրդ մը տուաւ եւ մենք իսկոյն համոզուեցանք:

Եւ խորհուրդ կուտամ ձեզ մօտնալ այդ մարդու արարքները, որովհետեւ եթէ չարունակէք մաքաւել իրեն դէմ պիտի տուէք, քանի որ ձեր իսկական եւ կեղծ անունները դիմէ . . .»

1890 փետրուարին պ. Փորթուկալեան ըստիպեց մեզած նկատուելով, իսկ մը նախախտութիւնը ու անէճքներ թափելով իրեն կմախքին վրայ՝ յարաբերութիւննիս բողոքովին խղցնինք:

Ինչպէս որ 15 տարիէ ի վեր յեղափոխական ապարդք եղած էր գործէինք, պ. Փորթուկալեանի արարքներէն առանց յուսահատուելու նորէն ընկերներովս որոշեցինք գործել եւ քիչ ատենէն «Հնչակ»-ի հետ կապուեցանք:

Գրեթէ ամիս մը վերջ Պոլսոյ մէջ վաղեմի բաղադրանքով . . . անձի ընկերներէն մին ինձ կը վերադարձրէր «Կայծեր» տարբեր կեղծ ստորագրութեամբ մի յօդուած, որ մի քանի ա-

միսներ առաջ հրատարակուած էր «Արմէնիա»-ի մէջ: Ա. ի ըսածները շատ ճիշդ էին, եւ էի այդ յօդուածագիր, «Կայծեր» չըրտագրուելուս պատճառն այն էր որ յօդուածս կը պարունակէր նաեւ պաշտական պարունիքներ, որ անմահ Որդէն-Նարայէլ ինձ ըսած էր որպէսզի գրեմ. քանի որ այդ հակառակորդներու դիմակները վար առած էի, որ տարիներով յեղափոխութեան բողոքն տակ հարիւրաւոր ուղիներ կորցած էին եւ իրենց հետեւողներու վստահութիւնը չարաչար գործածած էին իրենց ծանօթ էր «Կայծեր» ստորագրութեան, այդ պատճառաւ տարբեր ստորագրութեամբ գրած էի յօդուածս: Մեծ եղաւ դրամներ, որովհետեւ այդ յօդուածէն տեղեկութիւն ունէին . . . ր, Որդէն-Նարայէլ եւ մի ընկերս, այս բանը շատ հետաքրքրական էր ինձ համար, վերջէն իմացայ թէ՛ հակառակորդս երբ Փորթուկալեանի քով կ'երթայ, վրէժ մը լուծելու նպատակաւ Փորթուկալեանի այդ յօդուածս իրեն կուտայ ըսելով. «Ահա այս յօդուածն ալ ծանկիւնեան գրած է քո մասին, բայց «Կայծեր» չէ ստորագրած դիմումով:

Ահա՛ պ. Փորթուկալեանի մէկ նըմուշն ալ. Մարտէլ գտնուած միջոցիս աղիւն բարեկենդանէն մին շատ ստիպեց որ միասին Փորթուկալեանին երթանք, այդ բարեկամս շատ հետաքրքրէր էր պ. Փորթուկալեանի հետ քանի մը վայրկեան խօսելու: Բարեկամս յարգելուս համար խմբագրատուն դնացինք. առաջին տպագրութեան իրենց եղաւ տեսնել որ, փոխանակ չայ գրաչափերը գործածելու երկու երիտասարդ գաղղիացիներ կը գործածէր, պատճառը չը գիտեմ. քանի որ չայ գրաչափերն արտասահման անթիք ծառաւ. կը թափաւէին: Բարեկամս բացատրեց Եւրոպա ճամբորդելու նպատակը, պ. Փորթուկալեան «Արմէնիա» բառը լեզուէն պէս խոսելու ըսկեց ուրախութեամբ խօսել բարեկամիս հետ, իրեն խօսքերէն հետեւեցնելով. իբր թէ՛ «Հնչակեան» եւ «Կայծեր» խօսակցական կուսակցութիւններէ գտն նաեւ պէտք էր իրեն կարծիքներն ալ տանել կամ բանակցել իրը Արմէնիան կուսակցական մը, միայն մի քանի խօսք խօսեցայ, բայց պ. Փորթուկալեան ինք զիտէր որ այդ խօսքերս սուրի նման էինք կը մը մը մը: Ինք կը մը մը մը կը կարծէր թէ Շմառն ինձ պատմած չէր «Հնչակ» հրատարակութեան առաջ իրեն քով երթալ բանակցելին Միութեան մասին, որը ինք մերած էր, կը կարծէր թէ մտացած էի իրեն բոլոր անշահ պարգեւները: Իսկոյն ոտքի ելանք առաջ իրարմէն հաւաքանք մը արձակելով հեռացանք: Մէկ ժամէ վերջ Բարեկց պիտի մեկնէի, մարդերէն անպատճառ Բարեկցին նամակ մը գրել իրեն, բարեկամս լաւ համոզուեցաւ որ իրեն ըսածներս շատ ճիշդ էին թէ՛ պ. Փորթուկալեան մեր վստահութիւնները չարաչար գործածած էր:

Բարեկցն Ապրիլ 15 թուակըր ընդարձակ նամակ մը գրեցի իրեն, քանի որ տողեր հնգնական, իսկ մնացեալը իր բոլոր զգուշիկ արարքներու ամփոփումն էին, որը դիմումը բարեկամս միջոցաւ զրկեցի իրեն . . .»

ՅԱՐԱՐԻԹԻՆ Կ. ՃԱՆԿԻՆԵԱՆ

ԳՐԱԾԱՐԻ ՍԵ ԲՈՂՈՔԸ

. . . Ոմբագիր

Կը խնդրեմ «Միութեան» միջոցաւ Հայ հասարակութեան ծանօթացնել ստորագրելու տեղեկութիւններ, որ իմ ազգովապաշար կեանքի չոր ու ցամաք մի պատկերն է Նազարբէկեաններու ձեռքէն քաշած (*):

17 տարեկան մի պատանի էի. երբ սակե երկու տարի առաջ Լոնտոն եկալ մի ընկերի հետ: Պ. Նազարբէկեան էր կինը, պ. Շամատեանն էր Գալիպոլեանի ներկայութեամբ առաջարկեցին միմի «Հնչակ» գրատարութիւն ընել՝ անունը ի չաբանական 2-3 լիւրի գրապահ ծախի փոխարէն: Մենք պարծանքով եւ ուրախութեամբ յանձն տանք այդ ձեռք ծառայութիւնը, որովհետեւ մեր ուսին զարնելով մեզ կը ըսէին թէ ատով մենք կուսակցութեան եւ ազգին փորձուածութիւնը, որովհետեւ մեր ծառայութիւնը Բայց խոստացած զգալի ծախքը միայն մի չաբանք ըստացանք, այնուհետեւ շաբանք կը անցնէին եւ մենք հազիւ մի քանի ընկերի երես կը տեսնէինք:

96ի սեպտեմբերի ժողովով դարձ-

(*) Ամեն անոնք որ յանդգնած են իրաւունքի պաշտպանութեան բողոք բարձրացնել, Սօսիալիստ-դիմախոս պ. Նազարբէկեան ստացած են լուսանկարի ու հայհույութեան տարախներ: Այս դատար պատանիի խնդրիս առթիւ պ. Նազարբէկեան իր թերթին մէջ կատարաբար կը յարձակային այնպիսի մի անձնատրութեան դէմ, որ անբարեկամ եւ համարելի անուն մը ունի հայութեան մէջ: Մ. Ո.

Ես կրկնուեցաւ առաջին խոստումը, բայց նորէն անկատար մնաց, երբ կեղծիքի ընտրուած բոլոր անդամները զրգանքով հեռացան Նազարբէկեաններէն, մենք այլեւ կաշկանդուած դեմքի պէս մնացինք անոնց ձեռքին մէջ, մեզի ճամբու ծախք գտնէ չէին տար որ ազատէինք, 40 փարս իսկ չկար մեր գրապահները, որ կարողանայինք մտածել, թէ Լոնտոնի մէջ մեր երթանք, որմէ դիմենք: Ամէն կերպով ստրկացած ու բանտարկուածի պէս էինք ստունց ձեռքին տակ: Միայն կուով ու խայտառակութեամբ երեք ամիս առաջ երկու զօրանորներու ճանապարհէ ծախք տան. իսկ մեր ուրիշ երկուքին զայան, այլ եւս այլ խոստումներ անելով եւ խաբարելով, այս անգամ ամսական մէկ ոսկի զբարիքի ծախս տալ: Կրկին սուտ, եւ առանց մտաւելու «Բարիբաժն» օրը, (Այս խոսքը Միւտեղի օր) մեր երկուսին վեցական բէնի տին եւ ընդհանրապէս այն երկու ընկերներու երթալէն վերջը մեր վիճակն աւելի վատթարացաւ, տաւ խեղճ ու կրակ տեղեկք միշտ մեր երեսին կը զարնէին ըսելով. «Մեր երեսներու բերնի հացն է որ ձեզի տալիս ենք» եւ սեղանին առջեւ պառկած չունէ ու կատուն ցոյց տալով կը ըսէին «Ես չունէն ու կատուն Հայերից լաւ են»:

Պարտաւորած էինք անձայն տոկալ այս անարարներէն ու հողով տանելով: Այս յուսահատ ու գտն վիճակին մէջ կարտատուրկայ գրատար դիմում ընել «Իրթն» ա թագուհին, եւ երբ այս լուրը հրատարակուեցաւ, Նազարբէկեանները կատարած մեր վրայ յարձակեցան ծեծելու: Հետեւեցին այն եղաւ որ հարկադրուեցին գորտուելու ճանապարհակալութեան քաղաքի մէջ, որովհետեւ անոնք անհաշիւ անկեղծ գործունէութիւն, փտանկել մարմին եւ զօրաւոր միայն մէկ կուսակցութիւն, որուն առջեւ պարտատ է խոսարկել, իր քսակը բանալ ու իր կեանքն ինչ ուրիշ ազգային սրբազան դատար յաղորդութեան համար: Սյո չէ Հայութեան արքայ, հարուստ, տգէտ եւ իմաստուն դատաւարի մէջ տիրած ընդէ կարծիքը:

Միւրիկ գաղափարակցին՝ Ժ, ժամովաւաւ չըլլանք, ըստ իմ համոզման միութեան իրականացումը փութացնելու առաջին պայմանն է յեղափոխական ապարդք մարդը բաղադրանքով, սուտ յեղափոխականներէ, եւ մարդու միակ միջոցն է մատուցի միջոցաւ հրապարակ բերել իրենց իսկական անուններով այն ամէն արարածները որոնք անպաշտ Ժ զ զ ի թիւն թիւնք խոսքով կը գտնուէին: Միութեան դատաւարի իր գաղտնիքները:

Եթէ վերջապէս անկարելի դառնայ կուսակցութեանց միջեւ փոխանակութեան հարաբերութիւնը, այն ատեն ստեղծվ մի նոր յեղափոխական բարձր ընկերութիւն, որուն գործին տակ համախմբուին միութեան փափաքող թէ՛ Հնչակեան թէ՛ Կայծերական ընկերը նաեւ ոչ-կուսակցական Հայ մեծամասնութիւնը որ այսօր միութեան կը գոչէ: Ահա այս է յաղորդութեան գործնական միակ միջոցը: ԶԱՆՈ

գ ա ռ ն ա վ ա լ ի ծագածութեան ղերեցաւ կեղծաւորը զիմակը փութացնելու անպաշտ անպաշտները տեղացի միութեան դատաւարակցի ընկերներու զինքն. այն ալ Մայրոց վարդապետի ներկայութեամբ, որ կարգ մը կոյր հետեւորդներու պէս խ ա դ ա լ ի գարձած է իսպիհանի:

Ուրիշ պարտնէր, այլեւ բաւական չէ որ միութեան քաղաքի մի գուր կը գրողներէ խեղճ ժողովուրդի միջոց. քանի որ ձեր քաղաքները եւ ժողովրդի ազատակները չայն քաղաքային յանապատի: Կը մնան ինչ կը յուսար այսպիսի բաղադրանքներ կեղծաւորներէ, որոնք նախաբան ընտրած են աշխատի իրենց «Ես»-ն, «Փառք»-ն եւ «բարեկեցութեան» համար: Մեր գրած տողերը զրպարտութիւն չեն. այլ լոկ իրողութիւն, զոր կը վրայէ ամերիկեան հայոց 1/4 մասը:

Իւրաքանչիւր ծառ իր պտուղէն կը ծանցուի՝ կը ըսէ առաժը: Եթէ մեր յեղափոխական ղեկավարները հայրենասիրական անկեղծ եռանդով օժտուած ըլլային ու «չուզան ներկողներ չըլլային», անուշտ լըժօրէն նկատի պիտի առնէին Հայ հասարակութեան պահանջն եւ պիտի համապարկէին անոր առաջարկին, որը մեր նպատակին հասցնելու միակ միջոցն է:

Հայութիւնը իբր եղբայր եւ տառապալաւ Հայրենիքի գաւալ. չճանչնար ոչ «Հնչակ» եւ ոչ «Կայծեր» այլ կուգէ անհնել անկեղծ գործունէութիւն, փտանկել մարմին եւ զօրաւոր միայն մէկ կուսակցութիւն, որուն առջեւ պարտատ է խոսարկել, իր քսակը բանալ ու իր կեանքն ինչ ուրիշ ազգային սրբազան դատար յաղորդութեան համար: Սյո չէ Հայութեան արքայ, հարուստ, տգէտ եւ իմաստուն դատաւարի մէջ տիրած ընդէ կարծիքը:

Միւրիկ գաղափարակցին՝ Ժ, ժամովաւաւ չըլլանք, ըստ իմ համոզման միութեան իրականացումը փութացնելու առաջին պայմանն է յեղափոխական ապարդք մարդը բաղադրանքով, սուտ յեղափոխականներէ, եւ մարդու միակ միջոցն է մատուցի միջոցաւ հրապարակ բերել իրենց իսկական անուններով այն ամէն արարածները որոնք անպաշտ Ժ զ զ ի թիւն թիւնք խոսքով կը գտնուէին: Միութեան դատաւարի իր գաղտնիքները:

Եթէ վերջապէս անկարելի դառնայ կուսակցութեանց միջեւ փոխանակութեան հարաբերութիւնը, այն ատեն ստեղծվ մի նոր յեղափոխական բարձր ընկերութիւն, որուն գործին տակ համախմբուին միութեան փափաքող թէ՛ Հնչակեան թէ՛ Կայծերական ընկերը նաեւ ոչ-կուսակցական Հայ մեծամասնութիւնը որ այսօր միութեան կը գոչէ: Ահա այս է յաղորդութեան գործնական միակ միջոցը: ԶԱՆՈ

ՄԵՐ ԵՄԸ